Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
մայիսի 12-ի N 493 - Ն որոշման

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու հետ կապված հարաբերությունները:

2. Թափուր աշխատատեղը Հայաստանի Հանրապետության քաղաքացիով համալրելու նպատակով գործատուն անձամբ կամ փոստով՝ պատվիրված նամակով դիմում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)՝ ներկայացնելով թափուր աշխատատեղի նկարագիրը՝ համաձայն N 1 ձևի:

3. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված թափուր աշխատատեղի վերաբերյալ գործատուի կողմից ներկայացված տեղեկատվությունն ստանալուց հետո նախարարությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) այն մուտքագրում է զբաղվածության ոլորտի տեղեկատվական շտեմարան.

2) կատարում է տվյալների համադրում և դրա արդյունքում տվյալ թափուր աշխատատեղին համապատասխանող աշխատանք փնտրող անձանց առկայության դեպքում (իրենց համաձայնությամբ) ուղեգրում գործատուի մոտ:

4. Գործատուի պահանջներին համապատասխանող թեկնածուի առաջադրման բացակայության, ինչպես նաև առաջադրված թեկնածուին գործատուի կողմից մերժելու

դեպքերում գործատուն անձամբ կամ փոստով՝ պատվիրված նամակով սույն կարգի 3-րդ կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախարարություն է ներկայացնում սույն որոշման N 3 հավելվածով սահմանված ցանկում ներառված փաստաթղթերը՝ կոնկրետ օտարերկրացու համար կոնկրետ ժամկետով աշխատանքի թույլտվություն ստանալու համար:

5. Աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար սահմանված փաստաթղթերն ամբողջական չներկայացնելու և (կամ) դրանք թերություններով ներկայացնելու դեպքերում նախարարությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է գործատուին:

6. Եթե գործատուն նախարարությունից համապատասխան տեղեկացումն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում համալրում է աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար սահմանված ցանկում ներառված փաստաթղթերը և (կամ) վերացնում է դրանցում առկա թերություններն ու ներկայացնում է նախարարություն, ապա փաստաթղթերի ներկայացման օր է համարվում փաստաթղթերն առաջին անգամ նախարարություն ներկայացնելու օրը: Սույն կետում նշված ժամկետը չպահպանելու դեպքում փաստաթղթերի ներկայացման օր է համարվում թերի փաստաթղթերի լրացման օրը:

7. Նախարարը կամ նախարարի կողմից լիազորված պաշտոնատար անձն ընդունում է որոշում՝ կոնկրետ օտարերկրացի աշխատողի համար գործատուի առաջարկած կոնկրետ ժամկետով գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու կամ մերժելու մասին՝ աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8. Աշխատանքի թույլտվությունը տրամադրվում է՝ համաձայն N 2 ձևի, որը հանդիսանում է հատուկ հաշվառման փաստաթուղթ:

9. Աշխատանքի թույլտվություն տրամադրելը մերժվում է, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վիճակը վերջինիս վերլուծության հիման վրա թույլ չի տալիս այդ աշխատանքը.

2) տվյալ աշխատանքը կատարելու համար Հայաստանի Հանրապետության օրենքներով պահանջվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

3) պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը կեղծված են.

4) գործատուն, որի մոտ պետք է աշխատի տվյալ օտարերկրացին, նախկինում խախտել է օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու պահանջները.

5) գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանն սպառնացող պատճառներ:

10. Աշխատանքի թույլտվության տրամադրման, մերժման, աշխատանքի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու և աշխատանքի թույլտվության գործողության դադարման մասին տեղեկությունները գրանցվում են նախարարության կողմից վարվող՝ աշխատանքի թույլտվության տրամադրման, մերժման, աշխատանքի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու և աշխատանքի թույլտվության գործողության դադարման մասին տեղեկությունների հաշվառման գրանցամատյանում՝ համաձայն N 3 ձևի:

11. Աշխատանքի թույլտվությունը կամ աշխատանքի թույլտվության մերժման մասին գրավոր ծանուցումը սույն կարգի 7-րդ կետով նախատեսված որոշումն ընդունվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարությունն առձեռն փոխանցում է գործատուին կամ ուղարկում է նրան փոստով՝ պատվիրված նամակով:

12. Աշխատանքի թույլտվության մերժման մասին գրավոր ծանուցումը պետք է բովանդակի սույն կարգի 9-րդ կետով սահմանված՝ աշխատանքի թույլտվություն տրամադրելը մերժելու համապատասխան հիմքը:

13. Գործատուն աշխատանքի թույլտվություն տրամադրելու մասին տեղեկատվությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում առձեռն հանձնելու կամ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է այդ

մասին օտարերկրացուն՝ Հայաստանի Հանրապետություն ժամանելու և աշխատանքի թույլտվության հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու հարցը քննարկելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 134-Ն որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ներկայացնելու համար:

14. Աշխատանքի թույլտվությունը հաստատող փաստաթուղթը կորցնելու կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում գործատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում դիմում է նախարարություն՝ աշխատանքի թույլտվության կրկնօրինակն ստանալու համար:

15. Աշխատանքի թույլտվության կրկնօրինակը գործատուին տրամադրվում է սկզբնական փաստաթղթում ամրագրված ժամկետով, դիմելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, աշխատանքի թույլտվության կրկնօրինակի վերևի աջ անկյունում նշելով «Կրկնօրինակ» բառը, որի վրա դրվում է նախարարության կնիքը:

16. Աշխատանքի թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում և դրա գործողությունը դադարում է «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով:

17. Գործատուի գործունեության դադարեցման դեպքում օտարերկրացի աշխատողը կարող է աշխատանքի թույլտվության գործողության մնացած ժամկետով կնքել նոր աշխատանքային պայմանագիր (ծառայությունների մատուցման պայմանագիր) (այսուհետ՝ աշխատանքային պայմանագիր) այլ գործատուի հետ՝ պայմանով, որ նշված ժամկետի ավարտին մնացել է առնվազն երեք ամիս, և նոր գործատուն ստացել է նախարարության համաձայնությունը, ընդ որում, նոր գործատուին համաձայնությունը տրվում է գործատուի դիմելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

18. Օտարերկրացու հետ աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում գործատուն դրա կրկնօրինակը ներկայացնում է նախարարություն՝ առձեռն հանձնելու կամ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման համար՝ համաձայն N 4 ձևի:

19. Գործատուի կողմից ներկայացված աշխատանքային պայմանագրի և դրանում կատարվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը (գործատուի անվանումը, աշխատանքային պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարեթիվը, աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը, օտարերկրացու կողմից զբաղեցված պաշտոնի անվանումը) նախարարությունը տեղադրում է նախարարության www.mlsa.am կայքէջում համապատասխան տեղեկատվությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

20. Եթե աշխատանքային պայմանագիրը լուծվում է մինչև դրա գործողության ժամկետի լրանալը, ապա գործատուն աշխատանքային պայմանագրի լուծման մասին գրավոր տեղեկացնում է նախարարությանն աշխատանքային պայմանագիրը լուծելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում

21. Նախարարությունը, նախքան օտարերկրացու Հայաստանի Հանրապետություն մուտք գործելը, օտարերկրացու դիմելու դեպքում, փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով նրան տրամադրում է մասնագիտական անվճար խորհրդատվություն և պարզաբանում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին օտարերկրացու և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերի համապատասխանության վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՆԿԱՐԱԳԻՐ

NN ը/կ	Առաջարկվող աշխատանքի և (կամ) պաշտոնի անվանումը	Աշխատանքային պայմանագրի գործողության սկիզբը և ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը)	Աշխատանքային գործառույթները	Աշխատավարձը	Աշխատաժամանակի տևողությունը	Աշխատանքի վայրը	Գործատուի կողմից ներկայացվող որակավորման պահանջը	Գործատուի կողմից ներկայացվող աշխատանքային, այդ թվում՝ մասնագիտական փորձի վերաբերյալ պահանջը	Աշխատանքի այլ պայմաններ*
1	2	3	4	5	6	7	8	9	10

*Ծանոթագրություն. Աշխատանքի այլ պայմաններն են՝ բնակարանային վարձի, տրանսպորտային ծախսի, կոմունալ վարձերի, առողջական ծախսի, կրթական ծախսի, ապահովագրական ծախսի փոխհատուցում, ամենամյա երկարացված արձակուրդ, ամենամյա լրացուցիչ արձակուրդ, արտաժամյա աշխատանքի համար նվազագույնից ավելի բարձր հավելման չափ, գիշերային աշխատանքի համար նվազագույնից ավելի բարձր հավելման չափ, ծանր, վնասակար աշխատանքներ կատարելու համար նվազագույնից ավելի բարձր հավելման չափ, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներ կատարելու համար նվազագույնից ավելի բարձր հավելման չափ, հանգստյան և ոչ աշխատանքային օրերին կատարված աշխատանքի համար դրույքաչափի կրկնակիից ավելի բարձր վարձատրություն, գործատուի կողմից կամ միջոցներով աշխատողի մասնագիտական ուսուցում, վերապատրաստում, աշխատանքի ծանր, վնասակար պայմանների առկայություն կամ բացակայություն, աշխատանքի առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմանների առկայություն կամ բացակայություն:

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Թ Ո Ւ Յ Լ Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N _____

Գործատուի անվանումը ----------
Գտնվելու վայրը ----------
Օտարերկրացի աշխատողի անունը, ազգանունը ----------
Օտարերկրացու անձնագրի սերիան և համարը ----------
Օտարերկրացու կողմից զբաղեցման ենթակա պաշտոնի անվանումը ----------
Աշխատանքի թույլտվությունը տրված է (օրը, ամիսը, տարեթիվը) ----------
Աշխատանքի թույլտվությունը գործում է մինչև (օրը, ամիսը, տարեթիվը) ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

--- ---
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ

--- ---
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

----- ---------- 20 թ.

16_493

Ձև N 3

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՄԵՐԺՄԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Գործատուի անվանումը	Գործատուի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ (ՀՎՀՀ-ն, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)	Օտարերկրացի աշխատողի անունը, ազգանունը	Օտարերկրացու անձնագրի սերիան և համարը	Աշխատանքի թույլտվության տրամադրման օրը, ամիսը, տարեթիվը	Աշխատանքի թույլտվության գործողության ժամկետի ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը)	Աշխատանքի թույլտվության համարը	Աշխատանքի թույլտվության մերժման		Աշխատանքի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու		Աշխատանքի թույլտվության գործողության դադարման	
								օրը, ամիսը, տարեթիվը	հիմքը	օրը, ամիսը, տարեթիվը	հիմքը	օրը, ամիսը, տարեթիվը	հիմքը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14

Ձև N 4

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
(ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ) ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Գործատուի անվանումը	Գործատուի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ (ՀՎՀՀ-ն, գտնվելու վայրը, հեռախոսա-համարը, էլեկտրոնային փոստի հասցեն)	Օտարերկրացի աշխատողի անունը, ազգանունը	Օտարերկրացու անձնագրի սերիան և համարը	Օտարերկրացու կողմից զբաղեցված պաշտոնի անվանումը	Աշխատանքային պայմանագրի (ծառայությունների մատուցման պայմանագրի) գործողության սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը)	Աշխատանքային պայմանագրի (ծառայությունների մատուցման պայմանագրի) գործողության ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը)
1	2	3	4	5	6	7	8

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
մայիսի 12-ի N 493 - Ն որոշման

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒՆ ՉԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետություն օրինական մուտք գործած օտարերկրացի աշխատողին աշխատանքի թույլտվությամբ նախատեսված աշխատանքով չապահովելու դեպքում օտարերկրացու, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների, որոնց թույլատրվել է ուղեկցել կամ միանալ նրան, ապրուստի, իրենց ծագման պետություն կամ այն պետություն, որտեղից ժամանել են, անձնական ունեցվածքի փոխադրման և վերադարձի ծախսերը գործատուի կողմից հոգալու հետ կապված հարաբերությունները:

2. Եթե գործատուն աշխատանքի թույլտվություն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում օտարերկրացու հետ չի կնքում աշխատանքային պայմանագիր և նրան չի ապահովում այն աշխատանքով (աշխատանքի թույլտվության մեջ նշված ժամկետով), որի համար գործատուին տրամադրվել է աշխատանքի թույլտվություն, ապա գործատուն հոգում է օտարերկրացու, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների, որոնց թույլատրվել է ուղեկցել կամ միանալ նրան, հետևյալ ծախսերը՝ նշված չափերով, յուրաքանչյուր անձի համար՝

1) ապրուստի ծախսը՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի կրկնապատիկի չափով՝ ամսական կտրվածքով, երկու ամիս ժամկետով.

2) անձնական ունեցվածքի փոխադրման ծախսերը՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի քառապատիկի չափով՝ միանվագ.

3) վերադարձի ծախսերն իրենց ծագման պետություն կամ այն պետություն, որտեղից ժամանել են՝ օտարերկրացու կողմից ընտրված տրանսպորտային միջոցով և տվյալ պահին հնարավոր նվազագույն գներով:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված ծախսերը չեն հատուցվում գործատուի կողմից, եթե օտարերկրացի աշխատողի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 6-րդ, 7-րդ, 12-րդ, 13-րդ կետերով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված հիմքերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2016 թվականի
մայիսի 12-ի N 493 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Օտարերկրացի աշխատողի համար աշխատանքի թույլտվություն ստանալու նպատակով գործատուն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացնում հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) դիմում՝ օտարերկրացու համար աշխատանքի թույլտվություն տրամադրելու մասին՝ համաձայն ձևի.

2) օտարերկրացու անձնագիրը.

3) օտարերկրացու ստացած մասնագիտական կրթության, որակավորման մասին փաստաթղթերը՝ հյուպատոսական վավերացմամբ կամ ապոստիլով հաստատված.

4) օտարերկրացու 3x4 չափի մեկ գունավոր լուսանկար.

5) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.2-րդ հոդվածով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը:

2. Սույն ցանկի 1-ին կետի 1-ին, 3-5-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում, իսկ 2-րդ ենթակետով նախատեսված փաստաթուղթը պատճենահան-վում է և վերադարձվում գործատուին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարար ---------- -ին
(անունը, ազգանունը)
---------- -ի
(գործատուի անվանումը)
---------- -ից
(իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը, անունը,
ազգանունը կամ ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը)

(գործատուի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ՝ ՀՎՀՀ-ն, գտնվելու
վայրը, հեռախոսի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

Դ Ի Մ ՈՒ Մ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի N 493 -Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետը և N 3 հավելվածը, խնդրում եմ տրամադրել աշխատանքի թույլտվություն ---------- -ին ----------
(օտարերկրացու անունը, ազգանունը) (թափուր աշխատատեղի անվանումը)

---------- ժամկետով աշխատելու համար:
(ժամկետը նշել բառերով)

Կից ներկայացվում են՝

NN ը/կ	Փաստաթղթի անվանումը	Նշում («ներկայացված է», «ներկայացված չէ»)
1.	գործատուի կողմից օտարերկրացուն առաջարկվող թափուր աշխատատեղի նկարագիրը	
2.	օտարերկրացու անձնագիրը	
3.	օտարերկրացու ստացած մասնագիտական կրթության, որակավորման մասին փաստաթղթերը՝ հյուպատոսական վավերացմամբ կամ ապոստիլով հաստատված	
4.	օտարերկրացու 3x4 չափի երկու գունավոր լուսանկար	
5.	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.2-րդ հոդվածով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը	

Դիմող ---------- ----------
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

« » ---------- 20 թ.

16_493

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2016 թվականի
մայիսի 12-ի N 493 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ԱՌԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված՝ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում ներառված հետևյալ ոլորտների մասնագիտություններ ունեցող օտարերկրացիները՝

ա. Ոլորտ 4՝ Բնական գիտություններ

«4-62.01.02 Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» մասնագիտությամբ «4-62.01.02.01-4 Տեխնիկ՝ հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցերի շահագործման և տեխնիկական սպասարկման» որակավորումը, «4-62.01.03 Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր» մասնագիտությամբ «4-62.01.03.01-4 Տեխնիկ՝ հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի շահագործման» որակավորումը, «4-62.01.04 Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտությամբ «4-62.01.04.01-4 Վեբ-դիզայներ» որակավորումը,

բ. Ոլորտ 6՝ Գյուղատնտեսություն

«6-01.50.01 Գյուղատնտեսագիտություն» մասնագիտությամբ «6-01.50.01.01-4 Գյուղատնտես» որակավորումը, «6-01.50.02 Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում»

մասնագիտությամբ «6-01.50.02.01-4 Ֆերմեր» որակավորումը, «6-01.50.03 Ջերմատնային տնտեսություն» մասնագիտությամբ «6-01.50.03.01-4 Տեխնիկ-ագրոնոմ» որակավորումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկում ներառված հետևյալ ոլորտների մասնագիտություններ ունեցող օտարերկրացիները՝

ա. «06 Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ)»,

բ. «0413 Կառավարում և վարչարարություն»,

գ. «0721 Պարենամթերքի տեխնոլոգիա»,

դ. «0412 Ֆինանսներ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ